



Արտադրական կարողությունների արդիականացման միջոցառում

Նպատակ



Տնտեսավարողների համար ապահովել մատչելի ֆինանսական միջոցներ՝ արտադրական կարողությունները արդիականացնելու և կազմակերպության արտադրողականությունը բարձրացնելու նպատակով:

Շահառուներ



Նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող, ՀՀ կամ ԼՂ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը

Օժանդակության ձևը



Նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների կողմից նոր/չօգտագործված մեքենա-սարքավորումների ձեռքբերման նպատակով գործընկեր ֆինանսական կառույցների կողմից տրամադրված վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորում:

Վարկերի/լիզինգի նպատակը



Օժանդակությունը կիրառելի է այն վարկերի/լիզինգի համար, որոնք տրամադրվում են տնտեսավարողներին նոր (չօգտագործված) սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով

Միջոցառման շրջանակներում սուբսիդավորման պայմանները

Լիզինգ

Դրամ/արտարժույթ

Արժույթը	Պայմանագրի արժեքը	Սուբսիդավորման ժամկետ	Սուբսիդավորման տոկոսադրույք	Ժամկետ
Դրամ	Մինչև 200 մլն	42 ամիս	10%	120 ամիս
	200 մլն և ավել	36 ամիս		
Արտաժույթ	Մինչև 200 մլն	42 ամիս	8%	120 ամիս
	200 մլն և ավել	36 ամիս		

Վարկ

Դրամ/արտարժույթ

Արժույթը	Պայմանագրի արժեքը	Սուբսիդավորման ժամկետ	Սուբսիդավորման տոկոսադրույք	Ժամկետ
Դրամ	Մինչև 200 մլն	42 ամիս	8%	120 ամիս
	200 մլն և ավել	36 ամիս		
Արտաժույթ	Մինչև 200 մլն	42 ամիս	6%	120 ամիս
	200 մլն և ավել	36 ամիս		



Մինչև 180 օր

Մատակարարման ժամկետի սուբսիդավորում



Մինչև 6 ամիս

Մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված



Մինչև 1 մրդ դրամ*

Վարկի/լիզինգի առավելագույն սուբսիդավորվող մաս՝ 1 մրդ դրամ

* Կանոնադրական կապիտալում 200 մլն դրամից ավելի ներդրման դեպքում, վարկի/լիզինգի առավելագույն գումար է սահմանվում ներդրման 5-ապատիկը, բայց ոչ ավելի քան 10 մրդ դրամը կամ արտարժույթի վարկավորման դեպքում՝ 5 մրդ դրամը



Միջոցառման շրջանակներում նպատակային ոլորտները



В (ԲԻ) «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»



С(ՍԻ) «Մշակող արդյունաբերություն»



Ғ (ԷՖ) «Շինարարություն»



Н (ԷՅՁ) «Փոխադրում եվ պահեստային տնտեսություն»



Ј (ՋԵՅ) «Տեղեկատվություն և կապ»



М (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»



Q (ՔՅՈԻ) «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում»



Р (ՓԻ) «Կրթություն»



Միջոցառման շրջանակներում գործընկեր ֆինանսական կառույցներ

- «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
- «Ակբա բանկ» ԲԲԸ
- «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
- «Ամերիաբանկ» ՓԲԸ
- «Արարատբանկ» ԲԲԸ
- «Այդի բանկ» ՓԲԸ
- «Ինտելոբանկ» ՓԲԸ
- «Կամուրջ ՈՒՎԿ» ՓԲԸ
- «Յոնիբանկ» ԲԲԸ
- «Ակբա լիզինգ» ՎԿ ՓԲԸ

- «Արոշինբանկ» ՓԲԸ
- «Արմսվիսբանկ» ՓԲԸ
- «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ
- «Կոնվերս բանկ» ՓԲԸ
- «Էվոկաբանկ» ՓԲԸ
- «Զարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
- «Էյչ-Էս-բի-սի բանկ Հայաստան» ՓԲԸ
- «Արմենիան Լիզինգ Բամփնի» ՈՒՎԿ ՓԲԸ
- «Ֆարմ Կրեդիդ Արմենիա» ՈՒՎԿ ՓԲԸ
- Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա



Միջոցառումից օգտվելու ընթացակարգը



Ֆինանսական կառույց

Տնտեսավարողը իր արտադրական կարողությունները արդիականացնելու նպատակով ցանկանում է ձեռք բերել նոր մեքենա-սարքավորումներ և դիմում է Էկոնոմիկայի նախարարության գործընկեր ֆինանսական կառույց



Վարկի/լիզինգի ստացում

Ֆինանսական կառույցը՝ համաձայն իր ընթացակարգերի, իրականացնում է տնտեսավարողի վարկունակության և վճարունակության գնահատում և տնտեսավարողին տրամադրում է վարկ/լիզինգ նոր մեքենա-սարքավորում ձեռքբերելու նպատակով



Սուբսիդավորում

Ֆինանսական կառույցը Էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացնում տնտեսավարողի սուբսիդավորման հայտը և Էկոնոմիկայի նախարարությունը որոշման պայմաններին համապատասխան իրականացնում է վարկի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորում:

